



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԴԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱԲԱԹ-ԱԹ-ԵՐԹ

Երրորդ տարի Թ 26 Յուլիս 1913 Թիւ 105

«Սրբազան Քահանայապետն Պոս Ժ. Կր մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթերը շա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի յարգաւանան կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Սրբազան Հայրն որսագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ կարգ. Մէրի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Գ. Թեղեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկի 7
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քու տնամարտ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ԱԿՁՐՈՒՆՔՆԵՐ

ՅԱՏԿԱՆՇԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

Էջմրածնական Հայերու Երեսփ. Ժողովոյ
վերջնութիւն գումարուէին մէջ երեւան եկաւ
անակնկալ պայքար մը՝ զոր կզերը, — առանց
բացատրութեան, — մղեց աշխարհական տար-
րին դէմ, Երուսաղեմայ վանքին բարեկար-
գութեան համար նոյն ժողովոյ նախորդ նիս-
տին մէջ առաջարկուած նոր կանոնադրի մը
առթիւ, որով աշխարհական տարրին կը յատ-
կացուէր վանքին անտեսական վարչութիւ-
նը: Երուսաղեմի վանքին մէջ շատոնց ող-
բալի վիճակ մը առած էր թէ՛ ներքին բա-
րեկարգութիւնը՝ ամէն տեսակ անկարգու-
թեանց կայան հանդիսանալով, և թէ՛ արն-

տեսական վիճակը՝ իւրաքանչիւր կրօնաւոր
մէջ մի շահամոլ շահադէտ և անկախ դործիչ
եղած ըլլալով և հազարաւոր ոսկիներու
պարտք մը բարդուելով: Ժողովին մէջ պայ-
քարը սուր հանգամանք մը ունէր, մղուելով
եպիսկոպոսներէն և վարդապետներէն, որոնք
երեկուան հակառակորդներ, այսօր միացած
էին, տեսնելով իրենց հաւաքական դասին
վստեմունքը, պաշտպանելու համար կոթե-
րանութեան ինկած բեռքիժը, ինչպէս հեղ-
նորէն կը դիտեն ժամանակ և Ազատամարտ,
որոնցմէ կ'ընենք մեր մէջբերումները: Բոլորն
էր նախորդ պատրիարքական Տեղապահ Ման-
կունի Եպ.ի վերը, որ կարգացուեցաւ Ժո-
ղովին մէջ, որով նա կռիւ կը յայտարարէր
կղերի եւ աշխարհականի միջեւ... միւս կող-
մէ ձաղկելով աշխարհականներուն մոտէք
վանքին մէջ՝ իբր աղէտաբեր եւ կործանարար
«սրբութեանց եւ նուիրականութեանց»: Նոյն-

պէս Հմայեակ եպ., Եզնիկ Վ., Տերունեան եպ. եւ Օրմանեան Արք. նոյն ջառագովականք ըրին, նոյն իսկ «հակասահմանադրական» եւ կործանարար նկատելով աշխարհականներու, Վարչութեան եւ Ազգ. Ժողովի միջամտութիւնը Երուսաղէմի ներքին գործերուն մէջ., մարդիկ՝ որոնց համար ո՛չ սրբութիւն կարելորդութիւն ունի եւ ոչ ալ եկեղեցական իրաւունքը: Հմայեակ եպ. որ ամենէն ենթադրեց իրենց եկեղեցականն է, լաւագոյն առիթը գտաւ... յեղեցեց Նահիկեանի մէկ խօսքը քէ վանքը աւագակներէ կ'առնուի աւագակայեցներու յանձնելու համար:

Եւ թէպէտ Յանձնաժողովին աշխարհական անդամներէն ոմանք կ'ուզէին հաւաստել որ իրենց նպատակը երբեք աշխարհականացում չէ, բայց եկեղեցականները միաբերան կը պնդային քէ իրենց գծած կանոնագիրը մեղսեղն է եւ շատ ուշ մնացած է իրենց վերջին պահու յետ կոչումը:

Երբ վերջապէս թեր ու դէմ պայքարը սաստկացաւ գերագոյն աստիճան, ժողովին աշխարհական տարրը ընդվզեցաւ և

Գրեթէ բոլոր աշխարհականները բռնուց կերպով պայքարեցան այս դասակարգային գիտակցութեան զարթումին դէմ եւ ջախջախիչ պատասխաններ տուին եւ այդ պայքարին մասնակցեցան հաւատարմապէս ազատական քէ պահպանողական աշխարհականներ: (Ազատութ.) :

Ժողովը հոծ մեծամասնութեամբ մերժեց այդ բարձր կղերականութեան բոլոր առաջարկները և որոշեց յիշեալ կանոնագրի վիճարկութիւնը շարունակել յառաջիկայ նիստին մէջ :

Դէպքերու այժը կը օտիպէ զմեզ ծանրախոհ կերպով դիտողութիւններ ընելու :

Շատ ուշ մնացած է հայ կղերք: Ինքն է որ քարոզեց, գրեց ու սորվեցուց, — հակառակ Աւետարանի և Ս. Հարց վարդապետութեան և սկզբունքներուն, — սորվեցուց թէ հայ եկեղեցին ժողովրդական է. ինքն է որ աշխարհականացուց հայ եկեղեցին: Օրմանեան, որ այսօր գլուխ կեցած է աշխարհականացնող աշխարհականներու դէմ մղուող

պայքարին, ամենամեծ հակասութեան մէջ կ'իյնայ, ինչպէս մէկը որ իրեն իսկ համոզումին հակառակ կը կեղծէ ճշմարտութիւնը: Միթէ ինքը չէ՞ որ դժբախտ հատորով մը մինչեւ իսկ վարդապետական բարձրութեան հասցնել ուզեց բացարձակ մոլորութիւն մը, զոր ճգնելով ապացուցանելու թէ, հայ եկեղեցին մէջ կը տիրէ աշխարհականը, Հիմա սկսան քաղել դառն պտուղը, և սկսան ողբալ, պայքարիլ. չա՛տ ուշ. ջուրը սկէն պէտք էր բռնել. հեղեղը զայրացաւ, թումբը պիտի խորտակէ, ո՞վ կրնայ դէմն անցնիլ: Սչացող նետը ետ չի դառնար. ինչ որ կը ցանէ մէկը, զայն կը հնձէ: Աշխարհականը պիտի իշխէ հայ եկեղեցիի մէջ, եկեղեցի մը առանց սկզբունքի, անդեակ նաւու մը պէս տարուբերող ամէն հովի քմահաճոյքին. այսօր տնտեսականը, ամուսնականը, բարեկարգականը, վաղը պիտի գայ վարդապետական մասն ալ, և ո՞վ կ'ըսէ թէ արդէն իսկ չէ եկած... Այսպէս սպառնալից պիտի համար վերջնական քայքայում սրբութեանց եւ նուիրականութեանց: Բնական, տրամաբանական, անհրաժեշտարար հարկաւոր հետեւութիւն:

Ո՛րքան մեղապարտ է այդ աննկարագիր, անսկզբունք և թեթեւախոհ կղերք... Ահա հիմա աշխարհականը, առանց խորութեան, բռնուց կերպով կը պայքարի այս դասակարգային գիտակցութեան նոյն իսկ զարթումին դէմ, իր ամբողջ կղերք նախատեսով սոյնօրինակ գոնիկ բացասողութիւններով... Եւ այս կղերականները կ'աշխատէին սոյն աղէտը ներմուծել նաեւ Կաթողիկոսայցս մէջ ալ !!...

Ճշմարիտ եկեղեցին Քրիստոսի՝ է Մի և ունի անսխալ Մի ԳլՈՒԽ, վարդապետ և գառաւոր անբողոքելի, միակ վարիչ և իշխան, Փոխանորդ Քրիստոսի և Յաջորդ Ս. Պետրոսի, Հոռոմայ Ս. Գահուն լրայ բազմած, որ պաշտօն և միանգամայն անբռնաբարելի իրաւունք ունի արածելու Քրիստոսի հօտը, բոլոր ոչխարները անխտիր. և ոչխարները չեն կրնար բնաւ իշխել, հրամայել, քննադատել, ալ պէտք է հնազանդին անոր ու հպատակին. Ունկնդիր լերուք առաջնորդաց ձեռոց եւ հպատակ կացէ՛ք նոցա :

Մեծ Հայրապետն ու Լուսաւորիչը՝ Ս. Գրիգոր, այս ճշմարտութեան վրայ հիմնեց Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցին, որ բնաւ անկախ չէ եւ չի կրնար ըլլալ. ապա թէ ոչ սյապէս ստրուկ եւ գերի պիտի ըլլայ իր որդւոց, իր ոչխարաց ձեռքը՝ Ս. Գրիգոր ա'յապէս ճանչցաւ ու մեծարեց Եկեղեցւոյ միակ Հովուապետը զՍ. Քահանայապետն Հռոմայ եւ իրմէ վերջը նոյնը ըրին Հայաստանեայց բոլոր ուղղափառ Ս. Հայրապետները:

Այս է ահա Կաթողիկէ ճշմարիտ Ս. Եկեղեցին:

Այս մեկ Եկեղեցիէն դուրս չկայ ու եւ չփրկութիւն:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ձանազան հարցեր

(Շար.)

Այս խառն յարաբերութիւնները միշտ վըստանդաւոր են. որովհետեւ անհրաժեշտօրէն իրարու կը հաւասարեցնեն մոլորութիւնն ու ճշմարտութիւնը, կաթողիկէն կ'ընտելացնեն իր դրօշը պահելու եւ մտնելու անկերպարան խումբի մը մէջ, որուն ընդհանուր յատկանիշը, պարզապէս բնական եւ բնապաշտական, է հիմնական ուրացումը աստուածային բարձր սկզբունքին որ կը պարտադրէ մարդուն, իր ամբողջ մարդկային գործոց մէջ, հաւատքի, շնորհքի գերբնական կեանքը, կաթողիկէ կեանքը:

Դարձեալ, աս բազմակողմանի վտանգէն անկախ, կայ ուրիշ մըն ալ, որմէ զիւրին չէ զգուշանալ. այս է այլեւայլ անձերու հանդիպումը, փոխադարձ յարաբերութիւններ, սոջի բերան քաղաքավարական, ապա սիրալիր, եւ վերջապէս բարեկամական, ուր խօսքը կը դառնայ ի հարկէ «դաւանականութեան» վրայ կամ բողոքականին կողմէ, որ առաւել կամ նուազ ճարտարութեամբ առիթն օգուտ քաղելով, նենգութեամբ առարկութիւն մը մէջտեղ կը նետէ կաթողիկէին

հոգին տարակոյսի կեռով կարթելու համար. կամ կաթողիկէին կողմէ որ մէկը դարձի բերելու եռանդէն մղուած առիթը պատեն կը համարի լոյս ծագելու մթադնած հոգւոյն մէջ իր մերձաւորին, որուն ընկերացեր է այդ մարդասիրական չէզոք ձեռնարկով:

Արդէն հասարակ կաթողիկէներու համար շատ ծանրակշիռ է այն առարկութիւնը, որ կը ծագի եղբայրսիրութեան վերարկուով ծածկուած բողոքական մոլորութեան ընկերական հաստատութենէն. Շատ աւելի վտանգաւոր է մտերմական խօսակցութեան մը միջոցին տեղի ունեցող մասնաւոր «առարկութեանց» յարձակումը: Ջատագովական զէնքը երկնայրի է, եւ պատասխաններու բուն ու թաւալուն յոյդերուն մէջ մարդ զիւրաւ ինքզինքը կը վիրաւորէ: Եկեղեցին չի սիրեր այս ամպափոյ բանակոխները: Ան գիտէ որ մէկ պարտեալ հակառակորդի դիմաց, իր զաւակներէն շատերը կ'ընկճուին հոն, առ ի չգոյէ կուսամարդութեան, եւ կորովի փաստերով ընդդէմ մոլորութեան, որուն ամէն հարուածները իրենց նպատակին կը հասնին. մինչդեռ ճշմարտութեան պաշտպանութիւնը բոլորովին տարբեր դժուարութիւն ունեցող ամբողջական գործ մըն է:

Մենք միայն վարդապետական վտանգներու վրայ կը խօսինք, քանի որ հոս բարոյականներու վրայ չէ խնդիրը: Ինքնին յայտնի է որ անոնք ալ հաշուի առնելու է, եթէ բողոքական միջավայրի մէջ խառն յարաբերութիւնները այդ մասին ալ կասկածելի են:

2. Վնաս ուրիշի համար. — Երեք կէտեր. ա. Ներկային մէջ որոշեալ միջավայրին համար. բ. Ներկային մէջ մօտակայ միջավայրերու համար, իրողութեան արձագանգ գտնելովը. գ. Ապագային մէջ:

ա. Ներկային մեջ որոշեալ միջավայրին համար:

— Այո՛, ասիկա շատ մեծ վտանգ մըն է: Ասիկա բարոյականի մէջ ներգործական գայթակղութիւն կոչուածն է, գործ որով մարդս իր ընկերը ի չարն կը հրապուրէ՝ խօսքով կամ օրինակով են: Ահա՛ քիչ մը նշանաւոր

կաթողիկէ անձնաւորութիւն մը բողոքական միջավայրի մը մէջ է։ — Մենք ինչո՞ւ պիտի չմտնենք այդպիսի տեղեր, պիտի ըսեն ուրիշ նուազ նշանաւորներ, որոնք պատրաստ և ձեռնհաս չեն դէմ դնելու այն խաբեպատիր առարկութիւններուն և տարակոյմներուն որոնց վրայ խօսեցանք։ Անգամ մը որ այս գաղափարը կաթողիկէացի մէջ հաստատուի, այլեւս աչքերնին գողած պիտի համակերպին բողոքականներու հրաւերներուն, և այսպէսով վերոյիշեալ անձնական վտանգները մեծածաւալ համեմատութիւններ պիտի առնուն։

բ. Ներկայից մեզ մօտակայ միջավայրերուն համար։

— Անջնջելի՛ բիծ։ Բ ժողովրդագիտութեան մէջ կ'ուզուի ետ կենալ այդօրինակ յարաբերութիւններէ։ Բայց Ա ժողովրդագիտութեան օրինակը ամէնուն առջեւն է։ Ինչո՞ւ համար այդ աստիճան զգուշաւոր խնդրահար ըլլալ։ մինչդեռ շատ կորովամիտ և լաւ մարդիկ անպատշաճութիւն մը չեն տեսներ խառն յարաբերութեանց մէջ երբ դաւանական չէզոքութիւնը երաշխաւորուի։ Ահա՛ ինչպէս կը կերպաւորուի գաւառի մը, ամբողջ երկրի մը մտայնութիւնը, թերեւս միայն մի քանի ազատամիտ և անխոհմ կաթողիկէից սխալին հետեւանքով։

գ. Ապագային։ — Անգամ մը ազատական հոսանքին անձնատուր ըլլալէ յետոյ, անոր դէմ դնելը շատ դժուար է, այնքան թաքուն կնճոռատութիւններ կան չար բնազդներուն մէջ մեր բնութեան, որ միշտ անյապ ցանկացող է անկախութեան և ըմբոստ օտար իշխանութեան դէմ։ Ի՞նչ մեծ է ուրեմն անոնց յանցանքը որ յառաջ բերեր են այդ վրտանգաւոր և դժուարակասելի շարժումը։ Աւա՛ղ, մենք սովոր ենք մեր գործերուն հետեւանքները գնահատել ըստ իրենց ներկայ հանգամանաց, ըստ առանձնական կամ մեր շուրջը գտնուող մի քանի մարդոց անձուկ շահերուն։ Եթէ քիչ մը աւելի իմաստասիրէինք, քիչ մը աւելի հեռուն նայէինք, զիւրաւ պիտի տեսնէինք, ապագային մէջ երկարաձիգ կոհակաձեւ ծաւալումը այն ցընց-

ման զոր մեր անմիտ գործերովը կու տանք ճշմարտութեան, առաքինութեան, մեզի անհրաժեշտ կարեւոր եղող անարատ կաթողիկէ կեանքի։ Այս է ահա՛ որ յուսահատութեան կը մատնէ այն ուղղամիտ հովիւները որոնք կը զրկուին այնպիսի միջավայրեր, ուր սուրդէն հաստատուած է ազատական ընկերական աւանդութիւնը, և որոնք այնքան դառն տառապանքներ կը կրեն ժողովրդեան՝ այս բողոքական յարաբերութեանց մասին խզաթիւրուած միտքը ուղղելու համար։

Մենք միայն գաղափարներ կը նշանակենք, զորս ամէն ոք կրնայ ընդլայնել իր հաւատքին և խղճին տրամադրութեան համեմատ։ Այսչափ բաւական է։

(Շարունակելի)

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՔԻԼԻՍԱՍՏՆԵՆ ՅԱԴԻՐԻ

(Տեղամի)

«Գօնթըն այլէսինի թէշքիլ իտէնէր շունլար իտի, օնուն զէվճէսի, իքի զըզլարը վէ տահա քիւչիւք եաշտա պուլունան պիր օղլու։ Պունլարտան եալընը օղլան չօճուլը գաշըրըտը, ֆապաթ նէրէյէ կիթալիյինի պիլմէմ։ Ինթիմալ աըր քի զահմէթ վէ մէշադ գաթընա թէհամմիլ իտէմէյէրէք էօլմիւշ օլսուն, չիւնքի օ թարիխտէն պէրի հիչ օնտան պահա օլունտուղընը իշիթմէմիչիմ։ Գօնթ իլէ զէվճէսի վէ իքի զըզլարը իտամա մահքիւմ իտիլաիլէր։ Լիօնտա էօլիւմէ մահքիւմ օլանլարըն աստէտի օ դատար չօգ իտի քի, արթըգ սար աղաճընտան սարֆը նազար իտիլէրէք, տօղրուտան տօղրույա թօքա թուլթարլարը»։

«Ճէնապը Հագգըն պիր թագտիլի իլահիսի նէթիճէսի օլարապ, գօնթ վէ զէվճէսի պիր գաշ հաֆթա ունուտուլտըլար։ Զաթէն օ սըրատա գըթթալըն տախի սօնու կէլմիւշ օլսուլընտան, արթըգ օնլար գուրթուլմըլար իտի։ Մա մաֆիհ, պիր մուխպիր, ճիւմնուրիյէթ մէմուրընա կիտէրէք, օ տէօրթ քիչիյէ դարըն վէրիլէն իտամ գարարընը խաթըրլաթսը վէ օ գարարըն պիր ան էվլէլ մէվլիլի

ի ճրայէ գծումսը իչուն իսրար էլէտի : Վարդապետ օ աղչազ մտխալի տէ պէն իմ» :

«Պու նէճիպ ալիլէ սոյասէթկեանա կէօթիւրիւլալինաէ , գէնկին օլմագ հըրը պանա օրատա տախի պիր տէնաէթ իրթիքեապ էթտիրտի : Օ կիւն ճէլլատ եալընըզ օլտուզընտան , քէնտիսինէ մուալէնէթ էթմէք իչուն պիր տոտմ իսթէտիլինաէ , օթուզ եաշլարընտա պիրի էնալինին արաընտան ալըլարագ , սոյասէթ նէրտիւպանընա չըզըզ , ճէլլատըն հանընտա տուրտը . վէ օ ապիլ գուրպանլարըն , օ միւնթէրէմ մարտիրոսլարըն ճէլլատը քէնտիսի օլալ : Իշթէ օ վիճտանըզ , զալէմ խուսխար ճէլլատ տա պէն իմ վարդապետ» :

Պուշարը սէօլէրքէն , իսթիյարըն կէօզլէրինաէն սէլ կիպի եաշլար ագարալ , սէսի պօղուլըզ վէ անճագ տէրին տէրին ահ ուէնին սէտալարը իշիտիլիտի :

Քանանայ ծնա ճէսարէթ վէրէրէք , Ալլահն պէօլիւք մէրամէթինէ սրընմասընը թալսիյէ վէ գաթիի իւմիս օլմամասը իչիւն թէշճի իտէր :

Խասթէ պիր դաշ տապիպա սիւքիւթտէն սօնրա քանանայա տէօնէրէք , «Վարդապետ , սիգէ հիքեայէ իթտիքլէրիմ տէնէթլի շէյլէր տիրլէր , պինաէն ալէյհ , պէն , հուզուրուներզտա վէ պա խուսուս Ալլահն հուզուրընտա պիր աճուզէ մախուզըմ : Ֆապաթ լութֆէն տինլէյինիզ , հէր շէյի սիգէ հիքեայէ էթմէք իսթէրիմ» տէր :

«Խայրխանլարըն իտամընտան սօնրա , խըյանէթիմէ միւքեաֆաթէն օնլարըն շաթօսընա , արազի վէ էմլաքընա ոահիպ օլտում : Պու սուրէթլէ պիւթիւն թէսալվուրլարըմ մէվզիի իճրայա չըգմըշլարալ : Արթըզ սէրվէթիմլէ ստատէթէ տէ մալիք օլաճալըմ զանն իտէրտիմ : Հէյ հաթ , էօլլէ օլմասը :

«Իքի սէնէ եալընըզ պաշըմա գօնթըն քէօշկիւնաէ իգամէթ իթտիմ , լաքին օ հէվալինին ինսանլարը պէնտէն նէֆրէթ իտէրլէրտի , թանըտըզլարըմ պանա եապաշմագ պիլէ իսթէմէյիպ , պէնտէն ուզագ գաշարլար իտի : Պիզզաթ վիճտանըմ պէնիմ ճէլլատըմ օլմուշտը , լէյլ ու նիհար պէնի մուազգապ

էյլէրտի : Օ պէնիմ էֆէնտիլէրիմին պիր վազըթ սաքին օլտուզլարը տայիրէլէրտէ զանն իտէրտին քի պէնիմ խըյանէթիմի եիւզիւմէ վուրմագ իչուն հէր վազըթ օնլարը կէլմիշ վէ գարշըմտա տուրմուշ կէօրիւրտիւմ : Պու հալէ տայանամաղըլմտան , իքինճի սէնէ քէօշկիւ թէրք իթտիմ , վէ գօնթըն օտասընտան պազը եշեա ալարագ կէլիպ պուրատա եերլէշտիմ : Իրթիքեապ էյլէտիլիմ ֆէզահաթըն աֆվընա մաղհար օլմագ նիյէթիլլէ պուրայա չէքիլտիմ վէ տիլէնճիլիլի իսթիյալ : Եյլէտիմ : Խայրխանլարըն վէ նանքէօրիւյիւմիւ տէրիսթի իթտիւմէլէրի իչուն պէրապէրիմտէ ալմիշ օլտուզըմ պու էշեալը մէսրուզէ արասընտա գըրգ սէնէյէ եազըն պիր գէման տըր քի եաշայօրում վէ գըրգ սէնէտէն պէրի տէ գուրպանլարըն իսթիւրահաթըրուլարը վէ պէնիմ կիւնաշլարըն քէֆարէթի իչուն քիլիսանին գաբուսընտա տուրմուշ ձէնապը Ալլահա եալվարըրմ» :

«Վարդապետ , բէճա իտէրիմ , շու տիւ վարտա աւըլը օլան սուրէթին եիւզիւնաէթի բէրտէյի գալաըրըն , օ սուրէթ պէնիմ խայրխանլարըն սուրէթի տիր» :

Կանոնիկոս սուրէթէ սօղըու կիտէր , բէրտէյի գալաըրըպ ծնա պապար պագմագ հէման պիր նիտալը ճանիւրաշ իլէ պազըրըր վէ էլլէրիլլէ եիւզիւնիւ գարատարագ : Խանընտա պուլընան գօլթուզլը սանտալիանըն իւզէրինէ տիւշէր գալըր : Հիշ պիր քէլիմի պիլէ թէլէֆֆիւզ իտէմէյէրէք հէօնկիւր հէօնկիւր աղլար վէ պու հալը եէս ու քէտէր իչինտէ պիր գաշ տագիգա տէվամ իթտիքալէն սօնրա «պապաճըզըմ . . . պապաճըզըմ» տէլէրէք ֆէրետտամիզ պիր սէս իլէ պազըրըր վէ տիզ չէօքէրէք տուա իտէր : Իսթիյար պուսըրատա հիճապընտան նէ եարաճաղընը շուշըրըպ , գալպինի էգէն հէյճանըն թագեիպի ալթընտա պաշընը պիր թարաֆա չէվիլէրէք քէնտի քէնտիսինէ լանէթ օգուր :

Ազ սօնրա , Կանոնիկոս Ալլահն իրատէթինէ թէսլիմ օլմուշ վէ քէսպի գուզվէթ էյլէմիշ պիր սուրէթտէ ալազա գալգար : Իսթիյար տախի կէօզ եաշլարը իչինտէ աշգարլար չէքէրէք եաթաղընտան գալգըպ է-

Ֆէնտի զատէսինին այագլարընա դարանմա-
ղա ճէհտ էյլէր, չիւնքի գարչըսընտա պու-
լընանըն, գօնթըն պիր տանէճիք էվլատը Տը
Վալըրիան օլտըղընը անլար: Փաղաթ Կանո-
նիկոս ծնա եագլաչարագ եաթտղընըն եա-
նընտա տիզ չէօքէրէք ծնը տէրաղուչ էյլէր
վէ միւպարէքլէր, «աղկըլիմ, բէտէր, վալիտէ
վէ հէմչիրէլէրիմ նամընա սէնի տէրաղուչ
էյլէր վէ սանա աֆվ իտէրիմ, վէ մէմուրը
պուլընտըղըմ Ալլահըն նամընա տա սէնի
միւպարէքլէրիմ» տէր:

— Նէ՞, պիր խայինի, պիր զամնաղը,
պիր գաթիլի, պիր ալչաղը տէրաղուչ տա
մը իտէճէքսինիզ, տէր իխթիյար պօլտնուգ
պիր սէտա իլէ, չէքիլինիզ, պէյզատէմ,
պէնի եալընըզ, իմոտտաղզ, թէտէլլիսիզ
պրապընըզ: Զաթէն ինտուլլահ մէրտուտ պիր
պէտպախթըմ, միւստատէ իսինիզ քի ին-
սանլարտան տա մէթրուգ օլարապ լտնէթլէր
իլինտէ էօլիւպ կիտէյիմ:»

— Տօսթըմ, դարաաչըմ, բահաթ օլ, պէն
սէնի սէվէրիմ, սանա աֆվ իտէրիմ, ինսան-
լար գատար սէրթ օլմայան վէ ինսանլարըն
էն էյիսինտէն տանա էյի օլան ծէնապը
Հագզ տա սանա աֆվ իյլէր:

— Թէչէքիւրլէր իտէրիմ, վարդապետ,
պու Քէլամլարընըզ պանա պիր ազ իւմիւտ
պախչ էյլէյօրլար: Սիզ պէնի թէլլին վէ
մահվ իտէճէք եէրտէ պանա աֆվ իխթիյի-
նիզ հալտէ, քէնտի աղիզ մէզհէպլիլէ սիզէ
պու գատար մուհապէթ իլհամ էյլէյէն Ալ-
լահըն մէրհամէթի, ինայէթի տախի պէօլիւք
օլմագ կէրէք տիր: Աֆվ իտինիզ պանա, էյ
յօնթըմ, աֆվ իտինիզ: Աֆվ էյլէ պանա,
եա՛ Ալլահըմ, մէրհամէթ էյլէ...»

Իխթիյարըն սօն գուզվէթի պիթմէք
իւզրէ իտի, սէսի քէսիլտի, ահ ու զարլարըն
չիտտէթի թահթընաա ծնուն կէօքսիւ գա-
պարտը: Քահանայ ծնուն խոստովանալընը
իչիթաի վէ սօնրա էյլէրինի գալտըրարագ
օնա արձակում վէրտի:

Պիր գաչ սաաթ սօնրա իխթիյար քէնտի
էսիլի էֆէնտիսինին օղլընըն գօլլալը արա-
սիտա վէ ծնուն օրհնութիւնլարը իլինտէ
թէսլիլի բուհ իտիյօրտը: Փաղաթ ծնուն

բուհը թէվպէ վէ մուհապէթլէ խէլաս օլմուչ
օլարապ ուչույօրտը:

Ծէնապը Ալլահ նէտամէթ կէօզ եաչլա-
րընա տաիմա աֆվ էյլէր:

Ե Ս Թ Ե Ր

ՈՂԲԵՐԳՈՒԹԻԻՆ ՌԱՍԻՆԻ

Թարգմանեց
ԽԱՅԻԿ Վ. ԱՅԱՆԱՍԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ ԵՍԹԵՐԻ

(Շար.)

Գ. Արարուած. — Համան կը զայրագնի
Մուրթէի փառաւորութեան մունետիկի դեր
կատարած ըլլալուն համար: Իր թշնամիէն
փութով վրէժ առնելու յոյսը և Նսթերի սե-
զանը հրաւիրուած ըլլալուն պատիւը զինքը
չէն միսիթարեր, Սրտմտութենէն՝ յանձն չառ-
նուր հետեւիլ խորհուրդներուն իր կնոջ Զով-
սարայի, որ կը յորդորէ զինքը պալատէն հե-
ռանալ և առանձնական կեանք մը ապրելով
ժողովուրդին ատելութենէն և բախտին քը-
մայքներէն փախչիլ: Այս միջոցին, պալատին
պարագաներուն մէջ խնջոյքը կը սարքուի:
Իսրայելացի օրիորդաց երգչախումբը ուչա-
դիր ակնարկով կը հետեւի հրաւիրեալներուն
չարժուամբերուն, երգելով թագաւորին գո-
վութիւնը և վեհանձն իշխանի մը հպատակ
ժողովուրդին երջանկութիւնը: Արտաշէս ե-
տեւն ունենալով Համանը՝ կ'առաջնորդէ Նս-
թերը թատերաբեմին վրայ, իրեն կը խօսի
խանդակաթ սիրով: Այն ատեն թագուհին
անոր ոտքը կ'իյնայ, կը խոստովանի իր Հըր-
եայ ըլլալը և կը խնդրէ որ ներէ՝ դաւաճանի
մը խորհուրդներով իր մահուան դատաւար-
տուած եղբայրներուն: Համան կը բողբէ, և
Արտաշէս կը հրամայէ որ լռէ. Նսթեր յայտ-
նապէս կ'ամբաստանէ զսնիկայ, և անոր
պատժուիլը կը պահանջէ: Երբ Արտաշէս կը

հեռանայ՝ քիչ մը խորհելու և որոշում տալու համար, Համան Եթերի ոտքը կ'իջնայ, ներում կը խնդրէ։ Արտաշէս զանի այս դիրքին մէջ տեսնելով, կը հրամայէ, առանց ուրիշ բացատրութեանց, որ տանին Կախեն Թուրթքէին համար պատրաստուած փայտէն։ Մուրթքէն յարմար առնելին կը համարէ և Արտաշէսէն կ'ընդունի պաշտօնն ու պատիւները Համանի որ իր պատժաւայլը չհասած՝ զայրազնած ժողովուրդէն բղիկ բղիկ կը յօշոտուի։ Դաւաճանը կը պատուհասուի, և երգչախումբը, Թարգման արդարութեան, ուրախութեամբ կը տարփողէ առաքելութեան յաղթանակը և յանցաւորին պատժումը։

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԵԱՆՍ ՇԱԹԱԿԱՆ ԶԱՓԻՆ ՄԱՍԻՆ

Յ. Ռասինի այս հրաշակերտին ողբեցական հրապոյրն ու վայելչութիւնը՝ հայերէն Թարգմանութեան մէջ կարելի եղածին չափ պահել կարենալու համար, ընտրեցի հայկական չափը, որ մէկ կողմէն, ազատ ըլլալով յանգի և համալսնկ անդամով առողերու աւելորդ կապերէն, մեծ դիւրութիւն կու տայ բնագրին իմաստին հաւատարիմ մնալու, և միւս կողմէն իր այլաձայնկ անդամներուն և համանդամ տողերուն ներպաշնակութեան շնորհիւ, Թատերակիրն ներկայացումներու խաղաղ կամ յուզումնալից երեւոյթները պաշաճօրէն արտայայտելու ամէն տեսակ յարմարութիւն կ'ընծայէ։

Հայկական չափը, ինչպէս մեր արդի գրագէտներէն մին կ'ըսէ, ճերմոճտական թարձրագոյն զարգացումը կը ներկայացնէ ազաւորութեան մէջ. բանաստեղծական գոգծիքներուն երգեհոնն է, որ իր մէջ կը բովանդակէ դաշնակի, ջութակի, քնարի, սրնգի, զանազան գալարափողերու քաղցրութիւնները միանգամայն»¹

Սակայն հայկական չափին այս քաղցրութիւնները զգալու համար հարկ է ամէն բանէ աւելի փոյթ տանիլ լաւ արտասանելու

անոր անդամներուն վերջը գտնուող շեշտերն ու հանգիստները, որոնք անոր ներդաշնակութեան միակ պատճառներն են։

Արտասանութեան դիւրութիւն և սահունութիւն ընծայելու համար հայկական չափին քառանդամ բազմատեսակ տողերէն, այս Թարգմանութեան արտասանութիւնը կը տորներուն մէջ, ընտրած եմ միայն հետեւեալները.

1 — 4 — 4 — 3
2 — 4 — 4 — 3
3 — 4 — 4 — 3
4 — 4 — 4 — 3
2 — 3 — 4 — 3
3 — 3 — 4 — 3

Այս ողբերգութեան երգութիւնք մասերը, որ կազմուած են կարճ և երկայն զանազան չափերէ, Թարգմանած եմ բնագրին համաձայն տողերով, որպէս զի կարելի ըլլայ երգել զանոնք ֆրանսերէնին ձայնագրուած եղանակներով, որոնք Ֆրանսացի դժուարահաս՝ արուեստասէրներու անգամ այնչափ հիացում կը պատճառեն։

ՕՐՄԱՆԵԱՆԻ

»ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԻ, ԳԻՐԹԸ («

Դ.

Սակայն ընդհանուր դիտումէն զատ առանձնակի միտք մ'ալ ունեցեր են այս վէպի վերջին յեղաշրջողք Կեսարիոյ հայացմամբ։ Հայոց Կաթողիկոսներ Կեսարիայէ կը ձեռնադրուէին. Հայ Եկեղեցին Կեսարիոյ էկզարքութեան մէկ նոր գաւառն էր. այդ առաքելութեան գլուխներն որ Կաթողիկոս ալ ըսուեր են Կաթողիկէներու (այսինքն Աթոռանիւս Եկեղեցեաց) Աւագերեցներն (archipresbyter) ըլլալուն համար, ձեռնադրութեան հետ ամէն իրաւաբանութիւն Կեսարիոյ էկզարքէն կը ստանային. ուստի հարկ

¹ Բզմէլ. 1912 թիւ 10—11, էջ 438:

(*) Տեւ. թիւ 401, էջ 406.

տեսած էին վեցերորդ դարու Կաթողիկոսներ, մանաւանդ Աշտարակեցիին բաժանիչ ձրգտումներէն վերջ, ջնջել Կեաւրիոյ այդ հպարտական թեան ապացոյցը նոյն իսկ պատմութեան մէջէն: Ի՞նչ ընելու էր. ո՛չ միայն Կեաւրիան հայացնելու էր այլ պէտք էր նաև զայն Հայաստանէ հպատակեցնել: Ըստ այսմ թագէտ ըստ հայուն Հայաստանէ է որ ի Կեաւրիա կ'երթայ, Կեաւրիոյ առաջին եպիսկոպոսը ձեռնադրելու, ուսկից կրկին կը վերադառնայ ի Հայաստան վերադառնալու, որպէս զի Գերեզմանն ու Աթոռն հոս հաստատուած մնայ: Այսպէս ուզուած է, այսպէս ալ գրած է հայ պատմագիրն մտիկ չընելով ո՛չ Ասորիին, ո՛չ Յոնիին: Սակայն շատ զերբին է տեսնել պատմութեան մէջ թէ ինչպէս Հայերն իրենք զիրենք այս տեսակ վէպերով քնացուցած աստե՛ն Կեաւրիոյ էկզորքութեան եւ անով Յունաց գերիշխանութենէն չէին կրցած խուսիլ, որովհետեւ սա ամբողջած էր իրօք եւ ո՛չ երեւակայական վէպերով: Այս իրականութեան դէմ մէկ տաւրիւթիւն մը կրցան տակծել, որուն երկարատեւ հաւատարիմ ալ մնացին. տաւրիւցին այսինքն թէ Լուսաւորիչ ուղղակի Հռովմէն առած է իր իշխանութիւնը, ուստի հզատակ չէ ո՛չ Կեաւրիոյ, ո՛չ ալ Բիւզանդիոյ: Այս ցՀորմ տոմարովն ակնարկ մը կամ սկզբնաւորութիւն մը Դարուբնիայէ մէջ ալ մեծուած էր, ուր կ'ըսուի թէ Բեզոս կամ Բալաս սարգաւազ որ Աղզէի հետն էր, տար մահուցնէ ետք Անտիօք կ'երթայ հոն Սրապիոն Եպիսկոպոսէն քահանայ կը ձեռնադրուի. աւել այս Սրապիոնն ալ, կ'ըսուի հոն, իր բահաւայութիւնն ստացած եւ Հռովմայ Եպիսկոպոսէն Ձեփիւռիոսէ եւ սա Փետրոս, Փետրոս Յիսուսէ «Բրիստոս»: Օրմանեան որ այս վերջին աւանդութեան կը հակառակի հոգեւոյ չափ, կրնար նոյնչափ նախանձախնդրութիւն ունենալ թագէտ Առաքելոյն աւանդութեան դէմ, որ պատմականօրէն միւսէն աւելի հիմ մը չունի:

Անպէի ըստ Հայոց Աղզէի յետոյ Թաւադէի անցքը վերջնականապէս հաստատուած է Խորենացիէ, որուն պատմութեանը հարկ է

այսօր Ը. դարէ առաջ տեղ չտալ: Ի՞նչ կ'ընէ Խորենացի ըստած պատմաբանը. նախընթաց վէպերու եւ պատմութեանց վրայ ալ իր կողմանէ կ'աւելցնէ պարագաներ մը, որոնք կրնային ախորժելի ըլլալ Բագրատունի գերդաստանին, որ իւր օրով զօրեղ էր եւ Հայաստանի դահը ձեռք բերելու հետամուտ: Այսպէս՝ որովհետեւ Բագրատունիք ծագմամբ Հրեայ էին, կը ջանայ անոնց ծագումն մօտեցնել ամէն պարագայ: Դարուբնիայ եւ հայ թարգմանիչը Արգարու կ'ինը Երամիթ կ'անուանեն, զուտար Միհրդատայ, Խորենացին Հեղինէ կ'անուանէ, որ ըստ Յովսէփոսի Ազիւրիսի այդ թագուհին հրեութիւն ընդունած էր: Լարուբնիա եւ հայ թարգմանիչն հրեայ Տովբիդ մը կը յիշեն, որ հիւրընկալած է զԹագէտս յեպսիա հասած պահուն: Խորենացին այդ Տովբիդը Բագրատունեաց տան իշխան մը կ'ընէ: Նոյնպէս Արգարի դասպաններէն Արմանաց իշխան կ'ընէ Մար-Հիապն եւ զԵամշակրամ Ապահունեաց տան զուսի. մինչդեռ Եդեսիոյ երեւելիներէն էին անոնք: Դարձեալ Եդեսիոյ ի քրիստոնէութիւն դարձողներէն նշանաւոր մէկը, զոր Լարուբնիա պարզապէս Խօսրուն կ'անուանէ՝ Խորենացին Արծրունի կ'ընէ: Ահա Օրմանեանի «սոյց եւ անհետքի կարծած եղելութեան մէկ ուրիշ սկզբնական աղբիւր»:

Օրմանեան ինք ալ կը զգայ թէ ինչ զրգուարութեանց դիմաց կը գտնուի եւ Յունաց ու Լատիններու եւ Ասորոց ներհակ աւանդութեանց դէմ խօսք մը զրուցելու համար կ'ընէ. «Բայց մեմ դիտել կուսանք քեւանց այս աւանդութեան ալ Ս. Թադէոս Առաքեալի անուր հաստատուն կը մնայ Հայ Եկեղեցւոյ աւանդութեան համաձայն. որովհետեւ հմար ե հիմնուի ուրիշ մէկ աւանդութեան վրայ, որուն համեմատ Հայաստանի մէջ աւետարանական քաղաքութեան սկզբնաւորութիւնը կը վերագրուի Ս. Յովնա Թադէոս Առաքեալին, ու Ղեքեոս ալ կոչուած է:» Զուարճալի չէ՞ այս. եթէ առաջին աւանդութիւնը սոյց եւ հաստատուն էր, այս երկրորդին ի՞նչ պէտք կար. երկուքը մէկանց կրնան իրաւ ըլլալ: Եթէ այս ալ ա-

առջնոյն չափ հիմնեալ կը կարծուի, այն առնեմ երկուքն ալ սառուղութեան աստիճանէն շատ վար կ'իյնան և հազիւ կրնան պատմական կարծիք ըսուիլ. քանի որ անոնց դէմ կեցած են ուրիշ եկեղեցեաց աւանդութիւնները: Բայց Օրմանեան կ'ուզէ ըսել. երկուքէն մէկը անպատճառ ստոյգ ըլլալու է և մէկն ալ ստոյգ ըլլայ՝ Հայ եկեղեցւոյ առաջեկականութիւնը կ'ազատի: «Այդ վերջին աւանդութիւնը, որուն Յոյն ու Լատին եկեղեցիներն ալ կը ձայնակցին (?) եւ նոյն իսկ Հայ մատենագիրներն ալ իբր նշանակումն են պատմութեան հաճաճայն կը նկատեն, բաւական է հաստատելու եւ արդարացնելու Հայ եկեղեցւոյ աւանդութիւնը, ինչպէս նաեւ Արքայի վկայարանին ու գերեզմանին վաւերականութիւնը նուիրագործելու»: Մենք ասոր դէմ՝ հետեւելով պատմական աղբիւրներու, ստիպուած ենք ըսելու թէ այդ վերջին աւանդութիւնն ալ, որուն Յոյն ու Լատին եկեղեցիներն չեն ձայնակցիր, ինչպէս որ կ'ուզէ Օրմանեան, կը բղխի նոյն Եղեւսիոյ վէպէն, որմէ իր նախնիքաց հեքիաբը: Եւ ահա ինչպէս. Յուդա-Թադէոսի հետ, որ 12 Առաքեալներէն մէկն էր և Ղերէոս ալ կոչուած, շփոթուած է երբեմն և երբեմն զատ անձ նկատուած նոյն Եղեւսիոյ աւանդութեան երեսէն: Թադէոս 72 աշակերտներէն մէկը: Վասն զի առաջին աւանդութեան աղբիւրներէն Լաբուրիա և Եւսեբիոս պարզապէս «Թադէոս Առաքեալ» կ'անուանեն. նոյն անունն կը պահէ Ադդէի վարդապետութիւն ըսուած յիշատակագիրը: Ասոր վրայ Արքայու վէպին հայ առաջին թարգմանիչներն կամ պատմիչներն նոյն անձը նկատած են ի սկզբան թադէոս Առաքեալ կամ աշակերտ առանց զանազանելու, նոյնը ըրած են Խորենացի և յաջորդ պատմիչներն առանց ըսելու թէ երկոտուան Առաքեալներէն մէկն էր թէ 72 աշակերտներէն: Սնորոշ մնացած ըլլալուն համար երկու անձանց ենթադրութիւն և յետոյ զանազանութիւնը մուտք գրւած է: Յոյներն և Լատիններն Եւսեբիոսի «Եղեւսիոյ Առաքեալ կոչածը՝ Յուդա-Թադէոս Առաքեալ համարած են. բայց չեն ըսած եր-

բեք թէ նա Հայաստան վարած ըլլայ իր առաքելութիւնը: Այս աղբիւրներն նոյն Առաքելոյն գերեզմանը Պէրութ և կամ Փիւնիկիոյ քաղաքներէն միոյն մէջ (Սրաբո, Արատոս) կը դնեն. մինչ հայը զՊէրիթ-Պէրիգիւ-ընելով փոխադրած է ի Հայաստան և Արարտը կամ Արատոսը Արազ ըրեր է: Ուստի Օրմանեան կ'իմաստակէ, երբ ծածկելով թէ Լատինն և Յոյնն ինչ աւանդութիւն ունին այս մասին, կ'ըսէ պարզապէս թէ «Այն աւանդութիւնը որ կը պատմէ քե Ս. Թադէոս Դիդիմոս (Երկուորեալ) Ս. Թովմաս Առաքեալի եղբայրը, Եղեւսիա գտնուած եւ անկէ Արազ անցած է, Յոյներու եւ Լատիններու կողմէն ճանչցուած է:» — Ասորական աղբիւրներն մնալով վէպին վրայ՝ հոն կը դնեն Թադէոսի մահը և զայն երբեմն պարզապէս Թադէոս Առաքեալ, երբեմն 72էն մին կ'անուանեն: Կայ սակայն ուրիշ Յոյն և Ասորի աւանդութիւն մը որ զնոյն Առաքեալը Լաքաքիէ քարոզած և Արատի մէջ քարկոծուած կամ Բիրիսիկէ (Պէրութ) մահած կը դնէ, ինչպէս կ'աւանդէ նաեւ Միքայէլ Ասորին, որուն յաղագս քահանայութեան գրքին հայ թարգմանիչը ուղած է իր աղբային տեսութեանց համաձայն խեղաթիւրել զայն:

(Շարունակելի)

Ս Ա Մ Ս Ո Ն Ի ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ Հ Ա Ն Դ Ե Ս Ը

Յունիս 23ի առաւօտը, ըստ հին տոմարի, նշանաւոր օր մը եղաւ տեղւոյս ժողովրդեան և Վերափ. Բերց վարժարանին համար. քանզի երկու գեղեցիկ հանդէսներ կը զուգադիպէին, մին կրօնական և միւսը դպրոցական: Նոյն առաւօտ պատարագիչն էր Արհի. Յովհ. եպսկ. Նազլեան Վիճակաւորն Տրապիզոնի, որուն անախմբութեան (որ յաջորդ օրը պիտի ըլլար և կիրակի օրուան փո-

փաղրուած էր) հանդէսն ըլլալով, գեղեցիկ, աւուր պատշաճի քարոզ մըն ալ խօսեցաւ:

Յետ Պատարագի, Արհի. Եպիսկոպոսն ու Գերջ. Մեղմունի ժողովրդապետն ու Գեր. Նուրեան Յովս. Վրդ.¹ հրաւիրուեցան եկեղեցոյն կից գտնուած բարձրաշէն դպրոցը, որուն վերի սրահները պատրաստուած էին օրուան հանդէսին, և ուր անհամբեր կը սպասէին վարժարանին աշակերտներն ու հանդիսականաց երկսեռ բազմութիւնը: Հազիւ Արհ. Եպիսկոպոսը երկու վարդապետներով ներս մտաւ, ներդաշնակօրէն ողջունեց զինքը դաշնակի ճարպօրէն զարնուած եղանակը: Նախ՝ Գերջ. ժողովրդապետը իր և ժողովրդեան կողմանէ հակիրճ և իմաստալից շնորհաւորութիւն մը ըրաւ:

Շնորհաւորական ճառեր, հայերէն, զաղղիերէն սիրուն երգեր, տրամախօսութիւններ ևն. Մանկապարտէզի և բարձրագոյն դասարաններու աշակերտաց կողմանէ տեղի ունեցան. առաջին մասը որ տօնախմբութեան շնորհաւորութեան յատկացուած էր, շքեղօրէն կատարուելէ վերջը. սկսաւ երկրորդ մասը՝ մրցանակաբաշխութեան յատկացուած, որ նոյնպէս շատ սիրուն և գոհացուցիչ կերպով կատարուեցաւ նախորդին նման, երգերով, ճառերով և մերթ ընդ մերթ դասանիշերու ընթերցմամբ համեմուած:

Առաջին, երկրորդ մրցանակներու արժանի հանդիսացող աշակերտաց տրուեցան փառաւոր գրքեր, և զանազան յարմար առարկաներ Արհի. Գերապայծառ Հօր կողմանէ. իսկ նուազ նիշեր ունեցողներուն՝ ոսկեզօծ նիշերու ցուցակներ:

Բարձրագոյն դասանիշը 12 էր. իսկ նուազագոյնը 7, որուն չարժանացողը դասարանը չի կրնար փոխել յաջորդ դասընթացքի շրջանին:

Քննութեանց միշտ նախագահեց Արհի. Եպիսկոպոս Հայրը, ներկայ գտնուեցան նաև Գեր. Վարդապետներն ու աշխարհականներ:

¹ Այս վարդապետը Սամսոն եկած էր Վերափ. Քերց Դպրոցի շէնքին փոխանցման համար, քանզի ժամանակին իր անուան կառուցուած էր ըստ հին օրինաց տրամադրութեան:

առ հասարակ գոհացուցիչ էին պատասխանները. իսկ (ինչպէս ամէն դպրոցի մէջ ալ կը հանդիպի) աշակերտներ կային որոնք արդարեւ ծափահարութեան արժանի էին և ապագային փայլուն գիրք մը կը խոստանային:

Հանդէսը աւարտուելէ վերջը՝ Արհի. Նաղլեան Եպիսկոպոսը ոտքի ելաւ ու շնորհակալութիւն յայտնեց հեռեւեալ գեղեցիկ ճառով, որ սպազբուելով բաշխուեցաւ, ու լիարժէք ծափերով գնահատուելէ վերջը, հիւրանոցը հրաւիրուեցան Արհի. Եպիսկոպոսն ու վարդապետներ և ուրիշներ և հիւրասիրուեցան ըստ պատշաճի. և ամէնքը ուրախ զուարթ միկնեցան յառաջիկայ տարւելով: շրջանին աւելի բազմաթիւ աշակերտներ և աւելի շքեղ հանդէսներ ակնկալուով, լաւ դաստիարակուած զաւակներ ունենալու յուսով:

Հոս կը ներկայացնեմ Արհի. Գերապայծառ Հօր իմաստալից ճառը, որ միեւնոյն ատեն ներքողեան մըն է առաքինադարձ մայրապետաց եւ անոնց դպրոցին ու տուած լաւ դաստիարակութեանը, որ շատ կը գնահատուի և կը մասնանշուի ամէն տեղ եւ ամէնուն կողմանէ անխտիր կերպով:

Յաջողութիւն կը մաղթեմ, նախանձեղով Սամսոնի ժողովրդեան, որ ունի այսպիսի թանկագին զանձ մը:

ՀԱՆՌԻՍԱՏԵՍ ՄԳ

23 Յունիս (հ. Տ.) 1913

Խ Օ Ս Ք

ԱՐՀԻ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՊ.Ի ՆԱԶԼԵԱՆ

ՎԻՃԱԿԱՒՈՐԻՆ ՏՐԱՊԵՉՈՒՆԻ

ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԲԵՐՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՄՐՑԱՆԱԿԱՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Վերափոխման Բերց վարժարանիս աշակերտուհեաց մրցանակաբաշխութեան հանդիսին ուղուեցաւ տօնախմբութիւնս միացնել և ընել այն ամէն բարեմաղթութիւն, որ կրնար մխիթարել զիս, քաջալերել եւ սփոփել. շնորհակալ եմ: Սակայն լաւագոյն բարեմաղթութիւնն ինձ համար եղաւ այն յառաջդիմութիւնն, զոր ցոյց տուին քննութեանց առթիւ վարժարանիս պատուական

աշակերտութիւնը, այն փութաշանութիւնն որուն թափովը յոյս կու տան կտրելու ճամբու ընդարձակութիւնն, այն յաջողակութիւնն որ փութաշանութեան հետ համարտադրիչ է զարգացումի։ Կը շնորհաւորեմ աշակերտութիւնները։

Քայց այդ ամէնը միայն չէր կրնար յաջող ելքի ապահովութիւն տալ ինձ եթէ չըլլար այն երաշխաւորիչ գործակալութիւնն Առաքինազարդ Քոյրերու, որոնք անձնութեան, դոհողութեան եւ զրկանքի նուիրած ըլլալով անձերին՝ ամենայարմար գործիչներն են դաստիարակութեան. «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի, Երկնաւոր նահատակք եւ կուսանք իմաստունք» (Շարակ. Ս. Հովսիսմեանց)։ Դաստիարակութեան. գործը կը պահանջէ մայրենի անձնուէր հոգածութիւն եւ ասոնք Մայրապետ կը կոչուին. «Մնան կուսանք ազգս բազումս եւ մարք մանկունք զհրապարակս ծերոց, ի գիրկս սրբութեան աղօթից եւ պահոց, աճեցին հաւատով զարգացեալք ի Քրիստոս» (Անդ)։ Կոյս-մօր հրաշալի սերունդն է այն։ Կը պահանջէ նոյն գործը զոհող ընկերակիցութիւն եւ ասոնք Քոյր կ'ըսուին. «Եղին զանձինս գրաւականս բազմաց եւ եղեն փրկանք անձանթ աշխարհին» (Ոնդ)։ Կը պահանջէ դարձեալ հրաժարումն կապանգիր անձնգիրութենէ, յափշտակիչ աշխարհասիրութենէ, կը պահանջէ մէկ խօսքով սէր մը, որուն մէջ անձ, աշխարհ ու շահ բաժին չունենան եւ ահա ասոնք տիրանուէր կոչուին են. «Թեթեւաբեռն մարմնով եւ մօք սլացեալք ընդ երկայն ասպարէզս ծովածուփ կենցաղոյս» (Անդ)։ Մայրենի գորով, քրոջական սէր, կուսական անկապտելիութիւն՝ պայմաններ են, որոնց կատարելութիւնն խոչնդարձ կատարակներ կրնայ տալ։ Կը խնդակցիմ ուրեմն իրաւամբ մեր պատուական Քերց, շնորհակալ կ'ըլլամ իրենց հրապարակաւ եւ կը խորխուսեմ զիրենք զրօնաւորութիւններէ չլիարնալու, աշխարհօրէն աննկատելի մնալէ ետքէ չբեկամակելու. այլ ընդհակառակն աշխարհօրէն աղմկելէ զգուշանալով համուս՝ բայց զործունեայ, լոկի՝ բայց ժրջան յարատեւութեամբ հետեւե-

լու իրենց ծրագրին, որով ապահովապէս պիտի յաջողին։ Զիթոյ կակղութիւնը մեքենաներու չփոխն ընդդիմահարութիւնը արգիլելով անոնց գործունէութիւնը կը դիւրացնէ. ճոխն արձակող մեքենաները պակասաւոր են յաճախ եւ զիրար մաշող գործիչներու դանդաղ եւ սպառիչ շարժումը կը մատնեն շատ անգամ։

Վարժարան մը միայն ուսումնարան նկատելն աշակերտներն միայն միտք ենթադրել է. նա կը թարան ալ է. վասն զի մտքին հետ սիրտ մ'ալ կայ՝ խորհրդանիշ կամքին, զոր հարկ է կազմել ինչպէս միտքն։

Ըստ աւետարանական գեղեցիկ առակին տղայական միտքն ու սիրտն ալ եթէ ապառաժ ըլլան սերմ չեն ընդունիր, եթէ հրապարակային ճամբայ մը՝ ոտից կոխան կ'ըլլան իրենք ալ, ցանուած սերմերն ալ։ Հարկ է ապառաժն «մայրօրէն» կակղցնել անձնութեան, «Քեռարար» վարեկցութեամբ եւ զոհողութեամբ քաղիլ փշերն, «Կուսօրէն» հեռացնել զանոնք հրապարակէ, չըջապատել համեստութեան մացառով՝ որպէս զի Հոռով մէայի բանաստեղծին ըսածին պէս ամէն անցորդի ձեռք չգալի, ամէն եղունգի հարուած չի թորչոմեցնէ։ Աւանդական դաստիարակութեան հոգին ու ընթացքն է այս, որ ամէն տեղ կը քալէ ու պիտի քալէ ծայրայեղ դրութեանց ու մէթոտներու քովէ գուցէ նուազ շառաչով, բայց աւելի ապահով իր յաջողութեան վրայ։ Վասն զի գէպի զարգացում յաջող է շարժումը՝ երբ գիտէ քալեցնել նոր ոտքի ելածներն ուսկից կրնան քալել. անսովոր ճամբան անել կ'ըլլայ յաճախ, ծայրայեղը միայն ուժ կ'սպառէ։

Այսօր Յովհաննու Մկրտչի տօնն ալ ուղեցինք տօնել, Մեծին ի ծնունդս կանանց, անոր որ զրկուած էր պատրաստելու «զճանապարհ Տեառն» եւ Անոր շաւիղն հարթելու քարոզելով Քրիստոսի մեծաւոր պաշտօնն ի հրապարակ, ազդարարելով թէ «Ահաւասիկ տապար առ արմին ծառաց դի, ամենայն ծառ որ ոչ առնիցէ զպտուղ բարի հոտանի եւ ի հուր արկանի» (Մատթ.)։ Դադափարաց զուգորդութիւնը անհամեմատելի բաներն ալ

իրարու կրնայ մօտեցնել . այս պարագային այդ զուգորդութիւնը բնական կու գայ , քանի որ դպրոցական հանգիսին տօնախմբականն ալ միացուցին մեր Քոյրերն ու աշակերտուհիք : Ձեր քննութեանց ներկայ գտնուելով , պատուակա՛ն Օրիորդներ , քաղեցինք պտուղներ , զորս իւրաքանչիւրդ իր կարողութեան համաձայն կրնայիք տալ , եւ միախառնութեամբ հաւաստեցինք որ ձեր մէջ հատանելի ծառ չկար , այլ ընդհակառակն քաջալերելի էիք ամէնքնիւ ալ : Ներկայ մրցանակաբաշխութիւնը խրախոյս մը ըլլայ ձեզ դէպի յառաջգիմութիւն , իսկ կատարուած տօնախմբութիւնն քարոզ մը թէ յառաջգիմութիւնը Տիրոջ ճամբէն ապահով է , այն աւանդական դաստիարակութեան շաւղէն , ուր կրօնքի շնորհիւ միայն կրնան հարթուիլ ու վերցուիլ ամէն արգելք , խոչ ու խտրութիւն յառաջխաղացութիւն : Օգտուեցէ՛ք , ճամբան վրստանելի է՝ ուր Քրիստոս , նոյն ինքն « ճանապարհն ու ճշմարտութիւնն » մասնանշուած է , ուր առաջնորդ ունիք « ոչ զէզզն շարժուն » (Ղուկաս) , բայց եղէպի պէս գիւրաթեք անձեր որ մայրօրէն պթոտ խնամքով գիտեն զձեզ շրջապատել իւրաքանչիւրիդ պահանջի ձեւի համաձայն , « ոչ ի հանդերձս փափկութեան զարգարեալ » մարդիկ , այլ համեստ հոգիներ , որ « ծանեան եթէ երազ է եւ սուտ պաճուճանք » (Շարակ . Հոբիս .) և հետեւարար գիտեն ձեր կեանքի թարմութիւնը ապահովել կուսական անթառամութեամբ եւ կը սորվեցնեն խոստումի սրբութիւնն պահել հաւատարմութեամբ . ոչ շահագէտ վարձուորներ՝ այլ Քոյրեր՝ որ գիտեն ջախջախուն եղէպն չի փշրել ու առկայծեալ պատրոյզը չմարել : Վստահացէ՛ք անոնց ու յառաջ քալեցէ՛ք անոնց ցոյց տուած շաւղէն կրթական ասպարէզին մէջ , որ հիմպիտի ըլլայ ձեր ասպարէզ վիճակին :

Ահա իմ յորդորս , բարեմաղթութիւնս ու շնորհակալութիւնս :

ԵՏԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՏՕՆԱՅՈՅՑ

Յուլիս	27	†	Կիր. դժ. Ե. — Զկնի Վարդապետի
	28		Բշ. դկ. Վահանայ Գործնացունի եւ Գործիսի, Պողիկսոսի եւ Գրիգորիսի
	29		Դշ. ամ. Հրապց. և Աղեքսանդրիոյ, Արամասի եւ Կիրղի
	30		Դշ. ակ. Պանոց
	31		Եշ. քժ. Գրիգորի աստուածաբանին
Օգոս.	1		Ուրբ. դկ. Պանոց
	2		Շր. գժ. Վլասայ եպ. ին եւ Ոնեսիմեայ ուսակերթին Պողոսի:

Մ Ե Մ Ն Ն Ե Ր Ս Է Ս

(Շար.)

Ս. Ներսէս Հայրապետը յատկապէս մեծ գուժ և խնամք ցոյց կու տար կարօտեալներու : Իր սեղանին վրայ միշտ անպակաս էին աղքատներ, կոյրեր, կաղեր, ցուազնեայներ . որոնց շատ անգամ խորը անձամբ կը ծառայէր, անոնց կերակուր կու տար, ձեռքերնին, ոտքերնին կը լուար, վերքերնին կը պատէր, կը դարմանէր . և իր բոլոր ունեցածը անոնց պետքերը հոգալու կը գործածէր : Միւս կողմէ արթուն և քաջ հովուի մը պէս կը հսկէր իրեն յանձնուած տարած հօտին վրայ . գիշեր ցորիկ կը քարոզէր Աստուծոյ խօսքը և զամենքը կը յորդորէր աստուածապաշտութեամբ ապրելու :

Ս. Ներսէսի օրով Հայաստանեայց Եկեղեցին այնքան պայծառ և բարգաւաճ վիճակի մը հասաւ , որ եպիսկոպոսները իշխաններուն և թագաւորին հաւանութեամբ որոշեցին որ այլեւս Հայոց կաթողիկոսը առաջին սովորութեան համեմատ, Կեսարիոյ եպիսկոպոսապետէն չձեռնադրուի, ինչ որ Յունաց և Հայոց միջեւ այլ եւ այլ զլխէ գծտութեանց և դժուարութեանց առիթ կու տար, այլ ազգին եպիսկոպոսներէն ձեռնադրուի Պատրիարք, որ տիրողսը արդէն Սեղբեսարոս Քահանայապետը տուած էր Ս. Գրիգոր Լուսաւորչի :

Նոյն ժամանակները թշնամութիւն ծագեցաւ Հայոց Արշակ Թագաւորին և Հռոմայեցաց Վաղենտինոս կայսեր միջեւ . ասոր համար կայսրը սպաննեց Արշակի Տրդատ եղբայրը որ իրեն քով պատանդ էր . և Հայոց վրայ զրկեց ստուարութիւն զօրքով իր սպարապետը Մեծն Թէոդոս Սպանիացին : Արշակ տահաբեկած՝ ազաւեց Ս. Ներսէսի որ հաշտութեան հընարք մը գտնէ և ինքնակալին բարկութիւնը իջեցնէ : Ս. Ներսէս՝ ընկերակցութեամբ մի քանի աւագներու գնաց համոզեց Թէոդոս զօրավարը որ Հայոց վնաս մը չհասցնէ և անոր հետ մինչեւ արքունի դուռը եր-

Թալով յաջողեցաւ ինքնակալէն խաղաղութիւն ձեռք բերելու Կայսրը շատ սէր և յարգանք ցոյց տուաւ Հայրապետին և անոր յանձնեց իր քով գտնուող հայ պատանդները, որոնց մէջ էին նաև Արշակի եղբորորդիները Տիրիթ Արտաշէսեան և Գնէյ Տրդատեան։ Եւ որովհետեւ Կայսրը զուր տեղը սպաննել տուած էր Տրդատը, անոր համար աւելի գուժ ցոյց տուաւ անոր որդւոյն Գնէյին և անոր պարգեւեց հիւպատոտութեան պատիւ և շատ գանձեր։ Եւ լսելով թէ Հայոց Արշակ թագաւորին կինը մեռեր է, զրկեց անոր իր տղաականնէն չքնաղ օրիորդ մը Ուլուսմախդաւ անուամբ։ Ահա այսպիսի յաջողութեամբ Հայաստան գտնուաւ Ս. Ներսէս և զամէնքը ուրախացուց։

Բայց Արշակ քիչ ատենէն Տիրիթի հետ եղեռնական արարքներ գործելով ամապիտան ջրաւ Սուրբին աշխատանքները և կայսեր սէրը Որովհետեւ երբ Տիրիթ տեսաւ թէ Գնէյ, իր հօրեղբորորդին պատուով ու ճոխութիւնով շատ յառաջ գնաց և Սիւնեաց Անդովկնոս հայկական փեսայացաւ անոր Փառանձեմ աղջիկը կնութեան տունելով թագաւորապայել հանդէսներով, նախանձեցաւ և Արշակին տաքատանեց զայն։ Արշակ Գնէյի ինչքին և կնոջ աչք տնկած ըլլալով, զանկալ սպաննել տուաւ որի տանն, և Փառանձեմը քովն առաւ և որովհետեւ Ուլուսմախդաւ նոր թագուհին դեռ ողջ էր, Փառանձեմ տարափելի անօրէնութեամբ մը զայն թուշուարել տուաւ և ինքը անոր տեղն անցաւ։

Ս. Ներսէս՝ Արշակի և անոր գործակիցներուն այս ոճերը տեսնելով անիծեց զանոնք և Վաղարշապատէն հեռանալով առանձնացաւ և սկսաւ որդալ Արշակի վիճակին վրայ։

(Շարունակելի)

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ
„ՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝՝ ԳՐԲԷՆ

Գրիգ. Ս. — Գլ. ԺԲ. — Նեղուրեան օգտակարութեանը վրայ։

Բարի է մեզ, որ հրեմոն ունենանք ինչ ինչ վիշտեր ու շնորհիւնքիւնքիւնք։ որովհետեւ սնունք ստեղծ մարդու խորհի կու սաւ ինք իր վրայ, որպէս զի ճանչնայ թե ինք աստուծոյ մէջ է, եւ իր յոյսը յղեն աշխարհիս մեկ յանձն վրայ։

Եւ երբեմն հակառակութիւններ կրնան, եւ թե մարդիկ մեր վրայ չար եւ անկասար կարծիք ունենան թիպեալ մեկ յարի գործնէն ու խորհիմք։

Ասանք ստեղծ կ'օգնեն խոնարհութեան, եւ սնանկաւորութեան կը պաշտպանեն զմեզ։

Վասն զի ա'ն անկ յաւ եւս կը փնտնենք զԱստուծո՛վ կայ մեր ստիճ, երբ արտադրուս անարգութիւն մարդիկներէ, եւ մեր վրայ շաւ համարում յունենան։

ՍՈՒՐԲ ՍԻՐՏ ՅԻՍՈՒՍԻ

ՊԼՈՒԽ Բ.

Սուրբ Արքի ջերմեռանդութեան առարկան

(Շար.)

Հ. Ինչ պէտք է իմանալ երբ կ'ըսուի թէ Քրիստոսի Սէրն է որ այս ջերմեռանդութեան հոգեւորական առարկան կը կազմէ։

Պ. Պէտք է հասկնալ Տեառն մերոյ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ աստուածային և անստեղծ Սէրն և իր մարդկային ու ստեղծուած սէրը. իր սէրն առ Աստուած իր Հայրը, և իր սէրն առ մարդիկ։

Հ. ՔՐԻՍՏՈՍԻ սէրը զոր մենք կը պատուենք այս ջերմեռանդութեամբ, միթէ Տեառն մերոյ վերաբերեալ ուրիշ տօներու և ջերմեռանդութիւններու մէջ ալ նոյնպէս յարգուած ու պատուուած չէ։

Պ. Այո՛, ՔՐԻՍՏՈՍԻ սէրը այն տօներու և ջերմեռանդութիւններու մէջ ալ զօրութեամբ յարգուած ու պատուուած կ'ըլլայ, որովհետեւ այն աստուածային խորհուրդներն զորոնք մենք անոնց մէջ կը մեծարենք, ամէնքն ալ Որդւոյն Աստուծոյ Սէրէն յառաջ կու գան և ազգու կերպով կը յիշեցնեն զայն մեր սրտերուն. սակայն Ս. Սրտի ջերմեռանդութիւնն է որ առանձնապէս, յատկապէս և ուղղակի կը պատուէ ՔՐԻՍՏՈՍԻ Սէրը, որովհետեւ զայն իրեն մասնաւոր առարկայ ընտրած է։

Հ. Ս. Սրտի ջերմեռանդութիւնը՝ Ս. Հաղորդութեան Խորհրդոյն ջերմեռանդութենէն ինչ բանով կը տարբերի։

Պ. Իր առարկայով կը տարբերի. Ս. Հաղորդութեան Խորհրդոյն ջերմեռանդութեան առարկան՝ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ Մարմինն է որ ներկայ է խորհրդական տեսակներու ներքեւ. մինչդեռ Ս. Սրտի ջերմեռանդութեան առարկան ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ Սէրն է զոր կը խորհրդանշէ Անոր Սիրտը։

Հ. Ինչո՞ւ համար այս ջերմեռանդութիւնը իր նիւթական առարկային անունն առած է՝

Սիրտ Յիսուսի, և ո՛չ իր գլխաւոր առարկային անունը՝ Յիսուսի Սէրը:

Պ. Որովհետեւ Որդւոյն Աստուծոյ Սէրը բոլորովին հոգեւորական ըլլալով, մեղի զգալի կ'ըլլայ միայն իր խորհրդանշանով, որ է ՅԻՍՈՒՍԻ Սիրտը. անոր համար շատ աւելի բնական էր որ այս նոր ջերմեռանդութեան մեր տեսած խորհրդանշանին անունը տրուէր, այսինքն է Ս. Սիրտ ՅԻՍՈՒՍԻ, քան թէ անտեսանելի Սիրոյն անունը:

(Շարունակելի)

ԳԱԹՕԼԻՔ ՄԷՋԷՊԻ ԷՍԱՍԼԱՐԸ (*)

(Տեւալմի)

21. Թանձ մանասըլա Ալլահըզ քիմէ հօգ տըր:

Ալլահըն մէվճուտիյէթինի ինքեար իտէնլէրէ աթէ տէնիլըր քի պունըար իւշ նէվ տիրլէր. Ալլահ հօգ իմիշ կիպի իմրարը հայաթ իտէն ամէլի Ալլահըզըլար.— Քէմալը սէրպէսթի իլէ հէր տիւրլիւ ըզզալէթի եարապիւմէք, նէֆսի էմմարէլէրինի պիւա զայա ու շարթ իճրա իտէպիւմէք իչուն, Ալլահըն վար օլմամաընը արզու իտէն գալպի Ալլահըզըլար.— Նիհայէթ, սոֆաթալարտան իղֆալ օլունարազ, Ալլահ հօգ տըր զանն իտէն Ֆիքրի Ալլահըզըլար:

Մաէթթէնսիւֆ, Ալլահ հօգ իմիշ կիպի Ալլահըզը եաշայսն վէ ծնա հիշ ուպուտիյէթ տէ պուլունմայան ամէլի Ալլահըզըլար չօգ վար տըր:

Նէվի պէշէրին մուճիպի ար ու հիճապը օլան գալպի Ալլահըզըլար տա վար տըր քի Ալլահըն վար օլմամաընը արզու իտէրլէր, քէնտի քիթաղլարնաւ վէ զազէթալարնաւ տա պու թէմէնիկեթտա պուլունմազտան չէքիւմէզլէր, չիւնքի անվալը սէյիէնին ինթիզամընը ալաճազ օլան պիր Ալլահըն մէվճուտիյէթի քէնտիլէրի ըէնճիտէ իտէր:

Ցազաթ, ճիտտի Ալլահըզըլար, իթիտալը տէմ իլէ, զանաաթը վիճտան իլէ Ալլահը ին-

քեար իտէն հիշ պիր Ալլահըզ, աթէ հօգ տըր: Անճազ պինամուսըն գալպի տիր քի, Ալլահըն վար օլմամաընը արզու իտէր. «Պինամուս քէնտի գալպինտէ տէտի քի Ալլահ հօգ տըր», Ֆազաթ պունը Ֆիքրինտէ տէյէմէտի:


Աթիզմի թէվլիտ էլէյէն պաշըճա սէպէսլէր չունըար տըր. 1. Քիպը, քի ինսանըն ազլընը գարարտըր. 2. Գալպի պօզուզլուղը, քի Ալլահըն վարըղընտան սըզըլըր վէ գօրզար.— Պիր կիւն ազըլը պիր ատէմէ սօրարըար քի Ալլահըզըլար վար օլմամաընը սէպէսլի նէ տիր.— Պունտան գօլայ նէ վար, ճէվապընը վէրիւր. Ալլահըն մէվճուտիյէթինի ինքեար իտէն պիր քիմէ մէյտանա կէթիւրմէք իչուն պիր վիճտան ալընըզ վէ օ գատար գարալայընըզ քի «Ալլահ վար իսէ վայ հալիմէ» տէմէքսիլին քէնտի քէնտիսին նէ պազամասըն. իլթէ Ալլահը ինքեար իթմէնին սըրըր պունտա տըր:

Ալլահա ինանմայան վէ եախօտ ինանմայօր կիպի կէօսթէրէնլէրին գըսմը աղամը ալէսսէվիյէ. մէզհէպի էյի թէտրիս իթմէմիշ օլան զեվս լը հաիլլիք տիր, եախօտ քէնտի Ֆիքրիլէրինի ճէզալանտըրմամաըր իչիւն էօյլէ արզու էլէյէն մալըուր, խըրսըզ վէ սեֆիյն քիմէլէր տիրլէր: Ալլահ Ֆէնալարը, ժանսարմալարտան տահա զիյատէ բահաթսըզ իտէր, պու սէպէսլուն տէ տահա զիյատէ սէրպէսթ օլապիւմէք իչիւն ծնուն մէվճուտիյէթինի ինքեար իտէրլէր: Լա Պրիւյէր տէր իտի քի «մէթէտիլ, ըէրհիզքեար, աֆիֆ, ատալէթրէրվէր պիր ատամըն Ալլահ հօգ տըր տէմէսինի իչիթմէք իսթէրտիմ, չիւնքի պու կիպի պիր աստա հիշ տէյիւտէ Ֆիքրի մէնֆաթտան խալի օլարազ պէօյլէ սէօյլէմիշ օլաճապըր, հալպու քի էօյլէ պիր Ֆէրտ գաթիէն հօգ տըր».— Բուհընը Ալլահըն վարըղընը արզու իսկեկ պիր հալէք բուր, արքըզ օնուն վարըլը հազընսա հիշ պիր շիւպիէ իթմէզսին (Ժ. Ժ. Բուսօ):

(Մապաշի վար)

(*) Տես թիւ 402, էջ 428:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն



Հ Ռ Ո Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Ապաշխարութեան Ա. ժողովը պատասխանելով հետեւեալ հարցման. — Արդիոք 1913 Մարտ 8 թուականի Magni faustique eventus առաքելական թղթով հրապարակուած յոբելեանը կրնա՞յ վաստկուիլ շատ անգամ, այս մասին պահանջուած գործերը կրկնելու. — յարաբարեց թէ. Այս յոբելեանին լիակատար ներդրութիւնը կրնայ այնչափ անգամ վաստկուիլ, որչափ անգամ որ պատուիրեալ գործերը կրկնուին. իսկ յոբելեանին կցուած միւս առանձնաշնորհութիւնները, այսինքն, բանադրանքէ և վերապահեալ դիպուածներէ արձակումը և անօրինակները մէկ անգամ, առաջին անգամ միայն կրնան վաստկուիլ. — Ասիկա կը յանձնարարենք մեր ժողովրդապետաց և խոստովանահարց նկատաւութեան, որպէս զի հաճին մեկնել հաւատարմաց, որոնք կ'ուզեն օգտուիլ լիակատար ներդրութիւն շահելու դիւրութեան:

Ֆոյումպիոյ ամբիկեան հասարակապետութիւնը, շնորհիւ իր ներքին խաղաղութեան, կրօնական, ընկերական և անտեսական յարաճուն զարգացման մէջ կը գտնուի, որմէ հաւատարապէս կ'օգտուին իր հինգ միլիոնէ աւելի բնակիչները:

Ֆոյումպիոյ համաժողովը, նախաձեռնութեամբ Մ. Գաղաս երեսփոխանին, արգիլեց ազատ որմնագրութիւնը ամբողջ հասարակապետութեան մէջ, հիմնուելով հետեւեալ սկզբունքներուն վրայ.

«Կղեմէս ԺԲ.էն սկսեալ մինչեւ Պիոս Ժ. Հռոմի Քահանայապետները դատաւարներ են որմնագրական աղանդը, իրեն Բակուակ քրիստոնէական վարդապետութեան և բարոյականին Արդ, մեր Սահմանագրութեան 17 յօդուածին համեմատ, այդօրինակ ընկերութիւններ չեն կրնար գոյութիւն ունենալ Գոլմպիլի մէջ:

«Ասկէ զատ, որմնագրական օթեակներուն անբարոյականութեան և արգի բաղադրական ու ընկերական ոճիրներու մասնակցութեան պատմական ուղղակի ապացոյցները վճռական են:

«Գործեալ, որմնագրական ընկերութիւնը գաւ կը գործէ քրիստոնէական վարդապետութեան և բարոյականին վրայ հաստատուած ամէն կարգի և կանոնի դէմ: Ֆրանսայի և Փորթուգալի նոր դէպքերը ահաւոր պերճախօսութեամբ կը հաստատեն այս ճշմարտութիւնը:

«Ի զուրէ ուրեմն ճանչնալ կաթողիկէ կրօնը իրեն էական տարր ընկերական կարգի՝ զոր հանրային իշխանութիւններուն անկէ և պաշտպանել. եթէ չզբաւնուին օրէնքներ որ զսպին խափանեն աղանդաւորական մղեւածութիւնը, որ յարաճուն վարդապետութեամբ կը սպառնայ Եկեղեցւոյ և Գոլմպիլի»:

Ն. Լապրի, Պոլսոյ Լազարիսթներուն մեծաւորը Բարիզ գացած ըլլալով, Ֆրանսայի արտաքին գործոց նախարարին հետ երկար տեսակցութիւն մը ունեցեր է:

Վերջերս Ֆրանսական խորհրդարանին մէջ բուռն վիճարանութիւններ տեղի ունեցան վարդարաններու մէջ կրօնի ուսուցման մասին: Մ. Կառուս, թուագրականի երեսփոխանը, կաթողիկէներուն իրաւանց անվեհեր պաշտպանը, իր կորստի պերճախօսութեամբ ափ ի բերան բրաւ Մ. Պարթու՝ կրթական նախարարը: Վեց անգամ զարմանալի երկայնամատութեամբ սա հարցումը ուղղեց յիշեալ նախարարին. — «Կառավարութիւնը կաթողիկէից պահանջին վրայ, յանձն առաւ և 1882ի ուսուցմական ծրագրին մէջ մտնող մարդուս Աստուծոյ նկատմամբ ունեցած պարտքերու ուսուցումը... Այս՝ կամ ո՛չ, այս 1882ի պաշտօնական վճիռը դեռ ևս կը գործէ: Միայն ունիք, Տէր նախարար հանրային կրթութեան, այդ վճիռը յարգել տալու» — Վեց անգամ նոյնը կրկնեց և պատասխան մը չաւնելով իջաւ բեմէն և կառավարութեան ամբողջ անջեւ կանգ առած գոչեց. «Ուրեմն, Տէր նախարար, ինծի պատասխան չէ՞ք տար»: Մ. Պարթու համբի պէս անարարաւ մնաց:

Ս. Քահանայապետը ի վարձ Մ. Կառուսի այս անվեհեր արիւթեան, և ուրիշ մեծամեծ ծառայութեանց, շնորհեց անոր Սուրբ - Գրիգորի կարգին Մեծ-Խաչ պատուանշանը: Այս տախտակ Արհի. Տրամբը Գերապաճառի նախագահութեամբ մեծահանդէս տուած մը կազմուեցաւ, Հայիւնէ քաղաքին մէջ: Ճշմարտութեան քաջամարտիկ անդիտներ իրենց ցոյց տուած խանդավառ պատիւներուն համար շնորհակալութիւն յայտնելով ամէնուն, տեղեցուց. «Իրեւ զինուոր Եկեղեցւոյ, միշտ ցանացեր եմ անոր իրաւունքներ պաշտպանելու, եւ այն՝ ուրախութեամբ ու սիրով:

«Ինծի եղած պատիւներուն համեմատութեամբ բաժնետէս շնչին բաներ են: Բայց ասոնք ինծի նոր ուժ մը կու տան: Ասոնք կը մկեն զիս եթէ ոչ յաղթելու, գոնէ արիւնջալու, գործելու:

«Այսօր ամա ուրախ եմ տեսնելով թէ զիս պատուելով կ'ուզէ վառաւորել այն ազնիւ գաղափարներ որոնց զիս պաշտպան քամ է. եւ այն ամէն ջանքեր զորս կը բախեն այս գաղափարներ խաբարել ուղղութեան դէմ կռուելու համար: Շնորհակալութիւն ձեր աջակցութեան եւ ֆուլպետութեան համար: Կը տարուակեմ պայմար, որովհետեւ իմ եռակիս չի նուազիր եւ պաշտպանած դասիս մասին վստահութիւնս անսասն է: (Բուռն ծափեր, կեցցէներ):

Ն. Լա-Հէյէն կը հեռագրէ թէ Վաթմ. Կարդինալ Ռոսսուս որ Հոլանտացի է, մասնաւոր ունիւրութեան ընդունուեր է Հոլանտայի Վեհ. Վիչէլմինա թագուհիին կողմէ, որ իրեն շնորհեր է Հոլանտայի Աւիւսին առաջին կարգի պատուանշանը:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Աւագ Թեմի քահանայից տարեկան կրթ ու թիւերը կը սկսի վաղը իրիկուն։ Կրթութիւն ընող քահանայից տրամադրութեան տակ դրուած է Քահանայի Ծերներուն դպրոցն ու պարտէզը։ Քահանայի Ծերնէրուն վաղը իրիկունէ պիտի սկսին կրթութիւնը և աւարտեն շաբաթ առաւօտ Օգոստոս 2ին։ Ոմանք ալ Օգոստ. 3ին պիտի սկսին և աւարտեն 9ին։

Կրթութեան մէջ գտնուող ժողովրդապետաց տեղ որոշուած են ուրիշ քահանայներ, նոյն միջոցին անոնց պաշտօնը վարելու համար։

Յուլիս 21ին Պալիս եկաւ Գեղը. Յովսէփ Վ. Պարիկեան ժողովրդապետ Պիլէճիկի, ութօրեայ կրթութիւն ընելու համար, իրեն տեղը առժամապէս զրկուեցաւ Գեղ. Յովհ. Վ. Նալպանտեան։

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Յուլիս 23ի Ազատութեան տօնը մեծ ուրախութեամբ կատարուեցաւ մարաքաղաքի մէջ։

Օտմ. Բանակին Էտրնէ մտած ըլլալուն պաշտօնի լուրը Յուլիս 22ին հասաւ Բ. Գուռ։ Ահաւաստիկ սպարապետ Իզդէթ փաշայի հեռագիրը։

Էթրնէն ու Գրգ Բիլիսէն գրաւուեցան Ասուածային ողորմութեամբ։ Գնդ. Խարանիմ պէյի սկզբս հեծելագործն ու Էնվեր պէյի հրամանին ճակ գտնուած հեծելագործը այս օրու Էթրնէ հասան և Պոլիսը զօրաց հետ կարհասել ընդհարում մը ունեցան։ Այս ընդհարման պահուն մեր կորուստները գրեթէ ոչինչ են։ Մեր զօրաց արագ յաղթանակովս շուրջին շաբթիկէն առաջին առնուեցաւ։ Հեծելագործին օգնելու համար դիմուած հեծելակազմին գունդերը, որոնց քիւնր պիտի հաղորդուին, մէկ օրուան մէջ 80 քիլոմէտր համար առին։ Գրգ Բիլիսէ ուղղուած հեծելակազմն ու հեծելագործը նոյն արագութիւնն ու արիւթիւնը ցոյց տուին։ Ասոնց դէմ Պոլիսը հեծելակազմը ցաւ սկար ընդդիմութիւն մը ցոյց տուաւ և միայն Ա-

շիւրքի հեծելագործին պատկանող շուրջ մը սպանուեցաւ։ Թեմալին ժամանակ գտած էր միայն ռազմական մթերանոցները քանդելու։ Էթրնէն առնուելիք մանրամասնութիւնները հաղորդուելու վրայ են։

Կառավարութիւնը կը շարունակէ զբաղել ամբողջ երկրին մէջ գործադրուելիք բարենորոգմանց խնդրով։ Նոյն քննիչներու ընտրութիւնը մօտեցաւ Կաւարտի. Եգիպտացի Մուսթաֆա Մահմը փաշա ալ, որ ծանօթ վարչագէտ մըն է, քննիչ պիտի կարգուի։

Ազատամարտ և Բիւզանդիոն զինուորական իշխանութեան կողմէ դադարման դատաւարաւեցան։

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Պուրթէշէն Յուլիս 22 թիւով կը հեռագրուի.— Ռուսէն բանակը դադարեցուց իր յառաջխաղացումը։

Ռուսէն կառավարութիւնը Մ. Կէննաթիէֆի, Պուլկարիոյ նորընտիր արտաքին գործոց նախարարին, ուղղեց պուլկար ծանուցագրին իր պատասխանը, որ կը ըստնուեցաւ հետեւեալ շորս կէտերը։

1. Որոշ կերպով կը ճշգէ Թուրքիոյ Ծաղրու-Ճաւ-Պալլըք սահմանադրութիւնը և այդ գիծին արեւմտեան կողմէն տեղագրական գօտի մը, սահմանուած անոր ռազմադիտական արժէք տալու և միեւնոյն նպատակով պայման կը դնէ որ այդ գօտիին արեւմտեան և հարաւային արեւմտեան կողմը գտնուող կարգ մը պուլկար ամրացումներ կէտեր քանդուին։

2. Կը լիշեցնէ Լանտիի մէջ սկզբունքով ընդունուած բոլոր այն պայմանները որոնք կ'երաշխաւորեն Պուլկարիոյ կողմէ կցուած մակեդոնական հողերուն մէջ բնակող Գուցովարներու լեզուին, կրօնի և ազգային դատարարութեան ազատութիւնը։

3. Կ'ընդունի որ պատերազմիկները զինադադար կնքեն։

4. Կ'ընէ թէ հաշտութեան բանակցութիւնները պէտք է կատարուին Ռուսէն հողի վրայ։

Պուլկարիոյ պատասխանը գէա չէ հասած։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դեպքեր և սկզբունքներ	465
Եկեղեցական-գիսական խնդրներ	467
Ս. Յովնանէս Բիլիսարներն ժազիրի	468
Եսքեր	470
Օրմանեանի «Հայոց Եկեղեցի» գիրք	471
Սամսոնի Վերալիսիան վարժարանի հանդէսը	473
Եօթնեակ Բիլիսոնէի	476
Սուրբ Սիրս Բիլիսոնի	477
Գաբրիէլ Մեղնեպի Էսասլար	478
Տեղեկագրական	479

ԱՐՏՕՆԱՏԻՐ


ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՐՕՐԷՆ-ԽՄԱԿՐԱՊԵՏ

ԳԵՌՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Կ. Արմազանց Երաբարքերի, Բերա, Պայրամ փողոյ քիւ Ծ, Կ. Պալիս



ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիոյ համար, տարեկան՝ 40 դնկ. արծ. վեցամսեայ՝ 20.—
մէկ թիւ՝ 1 դնկ.:— Արտասահման՝ տար. ճր. 10. վեցամս. 5.—Վնարմունք կանխիկ են:
ՀԱՍՏԵ.— Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԵՐԱՆՈՅԹՈՒԹԻՒՆՔ.— 1.—Արձագանգ կը հրատարակուի Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պատաս-
խարեալ չէ անպատասխան կամ նոյնութեամբ հրատարակել իրեն ղրկուած ո՛ր եւ է յօդուած: 3.—Կեղծանունով ղրկուած
յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել խմբագրապետին: 4.— Ձեռագիրներ եւ չեն
դարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէ՛տք է գրուած րլլան թուղթին մէկ կողմը միայն: 6.— Ծանուց-
մանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէ՛տք է անհրա-
ժեշտ երկու դանեկանի նամակադրո՞ւմ ի վրասին ղրկել:

ՏՊԱՐԱՆ. Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ընտանեայնի հոխ է. ի վիճակի է
որ եւ իցէ սպազաւանք գործոց համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցումներ, զիբեր, տեսներ, հրաւիրագիրներ,
հարդեր, հարդ-տաւաններ, մանագրներ, եւն., եւն.: Գիները անմարցելի կերպով ածուց են: Գեղեցկագիտական հա-
ւակի եւ սպազաւանք մատուցեալն կողմանէ յանախորդները անհատկոյս զո՞ն պիտի մնան:

ԿԸ ԵՄԵՆՈՒԻ «Տարրական Սկզբունք Բիւստոնէական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխա-
նութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ամուր թղթակազմը 2 դնկն.:
